

ՀՈԳԵՎՈՐ - ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

ԱՐՄԵՆ ՔԻՆԱԿՑՅԱՆ

Հասարակության հոգևոր-մշակութային կյանքը կրոնաբարոյական և սոցիալ-մշակութային արժեքների վրա հիմնված նրա կեցությունն է, որն ապահովում է մարդկանց ոչ նյութական պահանջները բավարարումը, հատկապես սերունդների դաստիարակումն այդ արժեքների հիման վրա:

Հոգևոր-մշակութային անվտանգությունը բոլոր ժամանակներում եղել է ազգային անվտանգության հիմնարար տարրերից մեկը, որն ուղղակի, եթե ոչ որոշիչ ազդեցություն է ունեցել (և ունենում է) մյուս տարրերի ձևավորման և ընկալման վրա: Այդ է պատճառը, որ հոգևոր-մշակութային կյանքի կայուն և ապահով զարգացմանը վերաբերող հարցերը մշտապես գտնվում են հասարակությունում տարբեր դիրք զբաղեցնող և տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց ուշադրության կենտրոնում¹:

Հայաստանի Հանրապետությունում հատկապես վերջին ժամանակներում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ու սրընթաց զարգացման շնորհիվ հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում տեղի ունեցող փոփոխությունները, հատկապես հոգևոր-մշակութային ոլորտին վերաբերող հարցերը, սկսել են ավելի շատ հետաքրքրել նաև ազգային անվտանգության թեմայով զբաղվող փորձագետներին ու հետազոտողներին²:

Փաստենք, սակայն, որ հայ հասարակությունում ոչ միայն հոգևոր-մշակութային, այլև ամբողջ ազգային անվտանգությանն ու դրա հիմնական բաղադրիչներին վերաբերող առավել սուր հիմնահարցերի պատշաճ գիտական ըմբռնումն ու համակողմանի, հիմնարար հետազոտումը մնում են օրախնդիր և պահանջում իրապես լուրջ, պետական մտածելակերպի վրա խարսխված մոտեցում³:

¹ Այս օրինաչափությունը՝ որոշակի տարբերություններով, բնորոշ է բոլոր հասարակություններին: Բերենք մի օրինակ. ԱՄՆ ներկայիս նախագահ Բարաք Օբաման, իր աշխատություններից մեկում խոսելով Միացյալ Նահանգներում աղքատության հիմնախնդրի մասին, նշում է. «Ես գտնում եմ, որ աղքատ շրջանների շատ պրոբլեմներ առաջանում են մշակույթի ճգնաժամի պատճառով, և մեր արժեքների ու հոգևոր կյանքի մշանակությունն ավելի փոքր չէ, քան համախառն ներքին արդյունքին» (**Barack Obama**, *The Audacity of Hope. Thoughts on Reclaiming the American Dream*. USA, 2006, p. 16):

² Տե՛ս, մասնավորապես, **Մ. Գաբրիելյան, Ա. Դաբադյան, Ա. Թադևոսյան, Ն. Մարգարյան**, Հոգևոր անվտանգության ապահովման և բարոյական արժեքների պահպանման հիմնադրույթները ազգային անվտանգության համատեքստում, Եր., 2003, էջ 5, **Ա. Աղայան**, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, Եր., 2003, էջ 27-29, **Ա. Թադևոսյան**, Մշակութային ինքնության պահպանման և վերարտադրության հիմնահարցը ազգային անվտանգության տեսանկյունից, Եր., 2003, էջ 5-7, **Գ. Ա. Հարությունյան**, Հայության կազմակերպման և տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրները, «21-րդ դար», № 2, Եր., 2006:

³ Արդի պատկերացումներին համապատասխան՝ որպես ազգային անվտանգության հիմնական բաղադրիչներ ընդունված է առանձնացնել ռազմաքաղաքական անվտանգությունը, սոցիալ-տնտեսական անվտանգությունը և տեղեկատվական անվտանգությունը (տե՛ս, մասնավորապես, **Գ. Ա. Հարությունյան**, Աղբյուրների հակահայկական տեղեկատվական համակարգը, Եր., 2009, էջ 8):

Հոգևոր-մշակութային անվտանգությունն ապահովելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցների անբավարարությունը կարող է հանգեցնել ոչ միայն հոգևոր և մշակութային կյանքի լճացման ու քայքայման, այլև առհասարակ պայմաններ ստեղծել ազգային ինքնության աղավաղված ընկալման համար:

Ագրարային և ինդուստրիալ հասարակություններում հոգևոր-մշակութային անվտանգությունը հիմնականում արտահայտվել է հոգևոր արժեքների և մշակույթի կայուն զարգացման ապահովմամբ, արտաքին (ֆիզիկական և քարոզչական) ազդեցությունից դրանց պաշտպանությամբ: Մշակվել են հոգևոր և մշակութային արժեքների պաշտպանության ինչպես իրավական (այդ թվում՝ սահմանադրաիրավական, քաղաքացիաիրավական, վարչաիրավական, քրեաիրավական), այնպես էլ կրոնաբարոյական ու դաստիարակչական միջոցներ:

Սակայն ժամանակակից տեղեկատվական (հետինդուստրիալ) հասարակության պայմաններում հոգևոր և մշակութային կյանքի համար ավելի վտանգավոր սպառնալիքի է վերածվել քայքայիչ, կազմալուծող տեղեկատվական ներգործությունը: Այսպիսով, թեև նախկինում հոգևոր և մշակութային անվտանգությունն օրգանապես փոխկապակցված են եղել, սակայն դրանք հանդես են եկել զուտ որպես թշնամական ոտնձգությունների թիրախ: Այնինչ գլոբալացման արդի պայմաններում հոգևոր և մշակութային արժեքները կարող են տուժել ոչ միայն նպատակային գործողություններից, այլև տարաբնույթ հախուռն, հակադաստիարակչական, հաճախ մարդկային ստոր բնազդներն անթաքույց գովերգող, հասարակությանը հիմնական այժմեական հիմնախնդիրներից շեղող, սոցիալական հակասությունները խորացնող տեղեկատվական հոսքերից:

Այդ իսկ պատճառով ներկայումս հոգևոր-մշակութային անվտանգությունն առավել հաճախ դիտարկվում է անհատի, հասարակության և պետության ընդհանուր տեղեկատվական անվտանգության համատեքստում⁴:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է տալ հոգևոր-մշակութային անվտանգության՝ որպես տեղեկատվական անվտանգության բաղադրիչի հետևյալ բնորոշումը. **հոգևոր-մշակութային անվտանգությունը հասարակության հոգևոր, բարոյական ու մշակութային արժեքների այնպիսի վիճակ է, երբ դրանք պաշտպանված են տեղեկատվական քայքայիչ ներգործությունից:**

Հայաստանի Հանրապետությունն այսօր փորձում է դիմակայել ահագնացող արտաքին տեղեկատվական քայքայիչ ներգործությանը: Այդ իմաստով կարևոր քայլ էր ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգի մշակումը և հաստատումը (2009 թ. հունիսի 26): Բայց, ցավոք, մեր երկրում դեռևս մշակված չէ վերը նշված ազդեցություններից անհատի, հասարակության և պետության համալիր պաշտպանության հուսալի մի համակարգ, որը խարսխված լինի գիտականորեն հիմնավորված լուծումների, արդյունավետ տեխնոլոգիաների վրա: Սակայն հարկ է նշել, որ վերջին ժամանակներս մի շարք գիտական և ուսումնական հաստատությունների,

⁴ Ավելի մանրամասն տես **Ա. Լ. Քինակցյան**, Տեղեկատվական անվտանգության արդի մի քանի հարցեր, «Պետություն, պատմություն, տնտեսություն, մշակույթ», Եր., 2009, էջ 83:

ինչպես նաև անհատ գիտնականների ու հետազոտողների կողմից լուրջ հետաքրքրություն է դրսևորվում այս ոլորտի նկատմամբ, ինչը հույս է ներշնչում, որ հեռու չեն նաև այն ժամանակները, երբ տեղեկատվական անվտանգության ապահովումը կդրվի գիտական հիմքերի վրա:

Արդի գլոբալացման պայմաններում հոգևոր և բարոյական արժեքներն անտեսող կամ նսեմացնող տեղեկատվական հոսքերը բացասաբար են ազդում հատկապես երիտասարդության բարոյահոգեբանական վիճակի վրա, ծնունդ են անտարբերության զգացում, ստիպում են մտածել անհատի կայացման և զարգացման համար անհրաժեշտ պայմաններ (ինչպիսիք են, մասնավորապես, արժանապատիվ ու լավ վարձատրվող աշխատանք ապահովող որակյալ կրթությունը, ակտիվ, հագեցած հանգիստը, սպորտով զբաղվելու հնարավորությունը, ժամանցի կազմակերպումը) ապահովելու անհրաժեշտության մասին⁵:

Երիտասարդության այդ վիճակը նրան օրինաչափորեն վերածում է, այսպես կոչված, նպատակային լսարանի:

Հոգևոր-մշակութային անվտանգության վրա բացասաբար ազդող երևույթներից է հոգեորսությունը: Աղանդավորական շարժումները կրոնական համայնքի քայքայման և հասարակությունն ըստ կրոնական կողմնորոշման պառակտելու բավական հզոր գործոն են: Նրանց գլխավոր զենքերից մեկը տեղեկատվական-քարոզչական ազդեցությունն է:

Աղանդների քարոզչության շրջանակներում կարևոր տեղ է զբաղեցնում մարդկանց մեջ ավանդական քրիստոնեական արժեքների նկատմամբ հավատի սասանումը: Տարվում է ակտիվ ու ագրեսիվ պայքար քրիստոնեական հավատքի դեմ՝ քրիստոնեական խորհրդանիշների նկատմամբ կասկածներ սերմանելու, աստվածաշնչյան ավանդույթներն իմաստազրկելու և այլ աճպարարությունների միջոցներով⁶:

Պետության և հասարակության համար ագրեսիվ կրոնական աղանդների գործունեության վտանգը նախևառաջ ***փակ ամբողջատիրական կառուցվածքով խմբեր ստեղծելը, հասարակությանը դրանք հակադրելն ու ակտիվ տեղեկատվաքարոզչական ուղղվածությունն է:***

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության, ռազմական և տեղեկատվական անվտանգության հայեցակարգերի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել հոգևոր-մշակութային անվտանգության հետևյալ հիմնական սպառնալիքները (տեղեկատվական անվտանգության ոլորտին առնչվողները մզացված են)`

- հասարակության բևեռացումը, սոցիալական արդարության ապահովման պետական արդյունավետ երաշխիքների ոչ բավարար լինելը, աղքատության բարձր մակարդակը, սոցիալական ծառայությունների մատչելիության ցածր մակարդակը,

- յուրաքանչյուրի համար մասնագիտական կրթության ոչ լիարժեք մատչելիությունը, առողջ ապրելակերպի, ***ընտանիքի ավանդական դերի նկատ-***

⁵ Ավելի մանրամասն տես **Ա. Ա. Իկիլիյան, Ա. Լ. Քինակցյան**, Տեղեկատվական հոսքերի ազդեցությունը երիտասարդության վրա, «21-րդ դար», № 4 (22), Եր., 2008, էջ 80-96:

⁶ Տես **Ի. Բ. Պողոսյան**, Տեղեկատվական-հոգեբանական պայքարի մեխանիզմները կրոնական քարոզչությունում, «Ընտանիք և դպրոց», № 1, Եր., 2009, էջ 36-49:

մամբ վերաբերմունքի դաստիարակության դեռևս ոչ բավարար մակարդակը և ազգային ինքնության աղավաղումը,

- կրթական, գիտական և մշակութային ներուժի արտահոսքը,

- բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիարակության անբավարարությունը, պետության նկատմամբ պատշաճ հարգանքի բացակայությունը,

- ՀՀ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այնպիսի որոշումների, նորմատիվ իրավական ակտերի ընդունումը, որոնք հոգևոր կյանքում և տեղեկատվական գործունեության ոլորտում խախտում են քաղաքացիների սահմանադրական իրավունքներն ու ազատությունները,

- անհատական, խմբային և հանրային գիտակցության վրա ներազդեցության հատուկ միջոցների հակաօրինական կիրառումը,

- մշակութային արժեքների կուտակման և պահպանման համակարգերի, ներառյալ՝ արխիվների կազմալուծումը, փլուզումը,

- զանգվածային տեղեկատվության ոլորտում անհատի և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների խախտումը,

- ներքին տեղեկատվական շուկայից հայրենական գործակալությունների և զանգվածային լրատվական միջոցների դուրսմղումը և արտերկրյա տեղեկատվական կառույցներից Հայաստանի հանրային կյանքի հոգևոր, տնտեսական և քաղաքական ոլորտների կախածության մեծացումը,

- հայ հասարակության մեջ արմատավորված արժեքներին անհարիր այլ հոգևոր, բարոյական արժեքների և բռնության պաշտամունքի վրա հիմնված զանգվածային մշակույթի քարոզչությունը և հոգևոր արժեքների արժեզրկումը,

- հայոց լեզվի, հայկական մշակույթի և Հայ առաքելական եկեղեցու դերի թուլացումը,

- Հայաստանի ազգաբնակչության հոգևոր, բարոյական և ստեղծագործական ներուժի թուլացումը⁷:

Թվարկված սպառնալիքների շարքին կարելի է դասել նաև Հայաստանի նկատմամբ թշնամաբար տրամադրված երկրների պետական և ոչ պետական կառույցների կամ առանձին անհատների կողմից ներկայումս հոգևոր-մշակութային ոլորտում ահագնացած հակահայկական քարոզչությանը չարձագանքելը կամ ոչ համարժեք արձագանքը:

Այսպիսով, ակնհայտ է, որ ժամանակակից պայմաններում հոգևոր-մշակութային անվտանգության ապահովման գործառույթն առավելապես գտնվում է տեղեկատվական ոլորտում: Ակնհայտ է նաև, որ նշված սպառնալիքների չեզոքացման գործում հապաղումն ուղղակի անթույլատրելի է.

⁷ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն. հաստատված է ՀՀ նախագահի 07. 02. 2007 թ. հրամանագրով, «Հայկական բանակ», Եր., 2007 թ., ՀՀ ռազմական դոկտրին. հաստատված է ՀՀ նախագահի 25. 12. 2007 թ. հրամանագրով, «Հայկական բանակ», Եր., 2007 թ., ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգ. հաստատված է ՀՀ նախագահի 26. 06. 2009 թ. կարգադրությամբ, «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», № 35 (701) առ 15. 07. 2009 թ.:

դա կարող է հանգեցնել հոգևոր և մշակութային կյանքի այլակերպման, ինչը բացասական հետևանքներ կունենա հատկապես աճող սերնդի համար:

Հոռի բարքերը գովերգող և հանցածին ենթամշակույթի դեմ պայքարի ամենաարդյունավետ և քաղաքակիրթ աշխարհում փորձարկված ձևերից է պետական ֆինանսավորմամբ կամ աջակցությամբ արվեստի բարձրաճաշակ երկերի, կինո– և հեռուստաֆիլմերի, այլ ստեղծագործությունների արարումը: Գռեհիկ, անճաշակ և հայ մշակույթի մարդասիրական ոգուն անհարիր խոտանը չի կարող դիմակայել բարձրարժեք արտադրանքի հետ մրցակցությանը և վաղ թե ուշ տեղի կտա:

Նման մոտեցումն իրավամբ կարելի է համարել պետական մտածելակերպի դրսևորում և ուղղակի ժամանակի հրամայական:

Վերոգրյալը թույլ է տալիս որոշ հետևություններ անել՝

- տեղեկատվական տեխնոլոգիաների և հաղորդակցության միջոցների սրընթաց զարգացումը, ինչպես նաև գլոբալացման ընձեռած այլ հնարավորություններն առավել լայնորեն պետք է օգտագործվեն հասարակության հոգևոր և մշակութային կյանքի զարգացման նպատակով: Միևնույն ժամանակ, գլոբալացման արդի գործընթացները առաջ են բերել հայ հասարակության հոգևոր-մշակութային անվտանգությանը սպառնացող նոր մարտահրավերներ: Դրանց արդյունավետ դիմակայելու նպատակով անհրաժեշտ է ժամանակակից պահանջմունքներին համապատասխանեցնել հոգևոր և մշակութային կյանքի շուրջ հասարակության հետաքրքրությունների բավարարման մեխանիզմները, մասնավորապես՝ պարզ գովազդային մեթոդից անցնել լայն տեղեկացման, ստեղծել հոգևոր-մշակութային կյանքին յուրաքանչյուրի մասնակցությունն ապահովող մեխանիզմներ,

- ընդհանուր տեղեկատվական անվտանգության համատեքստում հոգեվոր-մշակութային անվտանգության ապահովման արդյունավետությունը բարձրացնելու համար նպատակահարմար է կատարելագործել նաև այդ ոլորտին վերաբերող իրավական ակտերը, մասնավորապես՝ հղկել և ընթերցողին (կիրառողին, օգտագործողին) ավելի մատչելի դարձնել դրանցում առկա ձևակերպումները, առավել բարձր իրավաբանական ուժ հաղորդել այդ ակտերի առանցքային դրույթներին, այսինքն՝ ենթաօրենսդրական ակտերով ամրագրելու փոխարեն դա կատարել օրենքների միջոցով,

- հաշվի առնելով հոգևոր-մշակութային անվտանգության ոլորտում առկա մարտահրավերները՝ իրավասու պետական մարմիններն ու գիտական հաստատությունները անհետաձգելի քայլեր պետք է ձեռնարկեն այդ հիմնահարցերով գիտական հետազոտություններ կատարելու ուղղությամբ: Ընդհանուր տեղեկատվական անվտանգության համատեքստում հոգևոր-մշակութային անվտանգության սպառնալիքների մասին գիտական դիրքորոշում մշակելը հնարավորություն կտա առավել գործուն, համալիր միջոցներ ձեռնարկելու այդ ոլորտում անհատի, հասարակության և պետության շահերի պաշտպանության համար:

АРМЕН КИНАКЦЯН – *Духовно-культурная безопасность как составляющая информационной безопасности.* – С переходом к информационному обществу духовно-культурная безопасность становится одной из важнейших составляющих

информационной безопасности. Недостаточные меры, предпринимаемые для её обеспечения, могут привести не только к духовному застою и разложению культурной жизни общества, но и исказить восприятие национальной идентичности. В статье сформулировано понятие духовно-культурной безопасности и показаны угрожающие ей тенденции, а также обосновано, что обеспечивать ее в современных условиях нужно в информационной плоскости. Кроме того, внесены конкретные предложения, как укрепить духовно-культурную безопасность армянского общества.

ARMEN KINAKTSYAN – *The Spiritual-Cultural Security as a Component of Information Security*. – After the transition to the information society, the spiritual-cultural security is more and more frequently treated as one of the most important components of information security. Inadequacy of measures for guaranteeing the spiritual-cultural security may cause not only the stagnation of spiritual and cultural life of society, but make also a room for the mutilated perception of national identity.

In the scopes of the article the author defines the concept of spiritual-cultural security, discusses the threats to it and comes to the conclusion that nowadays the function of its guarantee can mainly be found in the information area.

Based on some conclusions, concrete suggestions have been made in order to strengthen the spiritual-cultural security of Armenian society.